

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 16/1

28 ապրիլի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Ասյա Համբարձումյանի ներկայացուցչի բողոքները ՀՀ ՖՆ հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 12.03.2015 թ-ի թիվ 6207373 արձանագրության և ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 08.04.2015 թ-ի թիվ 5101259 ակտի դեմ:

Ա/Ձ Ասյա Համբարձումյանի ներկայացուցչի բողոքներում բերված փաստարկները.

Ա/Ձ Ասյա Համբարձումյանը, որը հաշվառված է Արաբկիրի ՀՏ-ում, 16.03.2015 թ-ին Արաբկիրի ՀՏ-ից ստացել է 12.03.2015 թ-ին հրապարակված թիվ 6207373 հանձնարարագիրը և նույն համարի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ արձանագրությունը:

Արձանագրությունը կազմվել է հսկիչ գնումների անցկացման մասին կարգի և «Ստուգումների կազմակերպման և անցկանցման մասին» ՀՀ օրենքի խախտումներով:

1. Արձանագրությունը իբր կազմվել է Իզաբելա Մխիթարյանի մասնակցությամբ, որը չի համապատասխանում իրականությանը:

2. Արձանագրվել են ակնհայտ կեղծ տվյալներ, որոնք հիմնավորվում են խանութի դրսի մասում կատարված ծայնագրությունով:

3. Չի համապատասխանում գնման փաստը, գնում կատարողներին տրվել է ՀԴՄ կտրոնը, սակայն ձևակերպվել է այլ գնում և այլ ժամանակ, իսկ մուտքագրումն ենթադրվում է, որ արվել է տեսուչների կողմից զեթ հաշվետվությունը հանելու ժամանակ:

4. Չկա գնման արձանագրության կազմման որևէ աշխատակցի մասնակցություն, ստորագրված է միայն տեսուչների կոմից, չկան առդիր փաստաթղթերը, չկա տնտեսվարող սուբյեկտի ղեկավարի կամ նյութական պատասխանատվություն կրող անձի դիրքորոշումը և ստորագրությունը: Դրանք չէին էլ կարող լինել, որովհետև նշված անձինք այդ օրը խանութում չեն եղել:

Ելնելով վերը նշվածից՝ բողոքաբերը խնդրում է 12.03.2015 թ-ի հսկիչ գնումների արձանագրությունը համարել անվավեր:

Իր հաջորդ բողոքով բողոքաբերը խնդրել է անվավեր ճանաչել նաև 12.03.2015 թ-ի հսկիչ գնումների արձանագրության հիման վրա կազմված ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 08.04.2015 թ-ի թիվ 5101259 ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 12.03.2015 թ-ի թիվ 6207373 հանձնարարագրի Ա/Ձ Ասյա Համբարձումյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում 12.03.2015 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6207373 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

ավագ հարկային տեսուչ Վահե Թովմասյանի կողմից Ա/Ձ Ասյա Համբարձումյանին պատկանող ք.Երևան, Փափագյան 21/6 հասցեում գտնվող խանութից 12.03.2015 թ-ին, ժամը 20:15-ին կատարվել է հսկիչ գնում՝ գնվել է 180 դրամի հաց, որի դիմաց վճարված կանխիկ գումարը վաճառողուհու կողմից չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ուսումնասիրությունն իրականացնող անձանց կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 20:19-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն 102000 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Z հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 180 դրամը, ժամը 20:20-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 20:21-ին նորից դուրս է բերվել Z հաշվետվություն՝ գումարով 180 դրամ:

Գնված ապրանքը հարկային տեսուչների կողմից ետ է վերադարձվել և ետ է ստացվել հսկիչ գնման գումարը, որից հետո տպվել է վերադարձի կտրոն կատարված վճարման չափով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ֆինանսների նախարարի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից 27.03.2015 թ-ին հրապարակվել է թիվ 5101259 հանձնարարագիրը, որի համաձայն Ա/Ձ Ասյա Համբարձումյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 08.04.2015 թ-ի թիվ 5101259 ակտը, որով վերոգրյալ խախտման համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ սույն բողոքները քննության են առնվել Հանձնաժողովի նախորդ նիստում, սակայն հաշվի առնելով Ա/Ձ Ասյա Համբարձումյանի ներկայացուցչի հայտարարությունը, որ կներկայացվի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6207373 արձանագրությունում նշված տվյալները կեղծ լինելու հանգամանքը հիմնավորող տեսագրություն, բողոքների վերաբերյալ որոշում չի ընդունվել: Այնուհետև բողոքաբերի ներկայացուցիչը հայտնել է, որ վերոգրյալ տեսագրությունը չի ներկայացվելու:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում հսկիչ գնումն իրականացնող պաշտոնատար անձանց կատարած համապատասխան գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները հիմնավորում են հսկիչ գնման ընթացքում վճարված գումարը ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը: Մասնավորապես, հսկիչ գնումից հետո՝ ժամը 20:19-ին, ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Այնուհետև կատարված վճարման արժեքը մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 20:21-ին կրկին անգամ դուրս է բերվել Z հաշվետվությունը:

Բացի այդ, ղեկավարվելով ՀՀ կառավարության 27.11.2003 թ-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի 6.1 կետի դրույթներով ուսումնասիրությունն իրականացնող պաշտոնատար անձինք վերադարձրել են հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքը և ետ են ստացել հսկիչ գնման գումարը:

Բողոքաբերի պնդումների վերաբերյալ, որ հսկիչ գնումն իրականացնող անձանց տրամադրվել է հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքի վերաբերյալ ՀԴՄ կտրոնը, վերջիններս նշեցին, որ իրենց տրամադրվել է նույն գումարի, այն է՝ 180 դրամի կտրոն, որը, սակայն, տպված է եղել մինչև հսկիչ գնում կատարելը: Հետևապես, նշված ՀԴՄ կտրոնը չի կարող համարվել հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքի դիմաց տրամադրված կտրոն:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի այն պնդումներին, որ հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 12.03.2015 թ-ի թիվ 6207373 արձանագրությունում նշված վաճառող Իզաբելա Մխիթարյանը չէր կարող ապրանք վաճառել, քանի որ այդ օրը փաստացի աշխատել է վաճառող Կարինե Հովհաննիսյանը, ապա այդ կապակցությամբ նշվեց, որ հսկիչ գնման ընթացքում ապրանքի վաճառքն իրականացրած անձի (վաճառողի) վերաբերյալ տվյալները վերցվել են նրա վրա փակցված բեյջից:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ՖՆ հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 12.03.2015 թ-ի թիվ 6207373 արձանագրությունը և ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 08.04.2015 թ-ի թիվ 5101259 ակտը կազմվել են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 12.03.2015 թ-ի թիվ 6207373 արձանագրությունը և ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 08.04.2015 թ-ի թիվ 5101259 ակտը թողնել անփոփոխ:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

